

ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« _____ » _____ 2021 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈՒՄԻՍԻ 8-Ի ԹԻՎ 861-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի Հայաստանի Հանրապետության քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները հաստատելու մասին N861-Ն որոշման N1 հավելվածի 2-րդ կետում լրացնել 11-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

11) «**Քիմիական զենքի մշակումը, արտադրումը, կուտակումը և կիրառումը արգելելու և այն վերացնելու մասին**» կոնվենցիայով չարգելված նպատակներ՝

ա. արդյունաբերական, գյուղատնտեսական, հետախուզական, բժշկական, դեղագործական կամ այլ խաղաղ նպատակներ,

բ. պաշտպանական նպատակներ, մասնավորապես նպատակներ, որոնք անմիջականորեն կապված են թունավոր քիմիկատներից պաշտպանության և քիմիական զենքից պաշտպանության հետ,

գ. ռազմական նպատակներ, որոնք կապված են քիմիական զենքի կիրառման հետ և կախված չեն քիմիկատների թունավոր հատկանիշների օգտագործումից, որպես պատերազմի վարման միջոցներ,

դ. իրավապահ նպատակներ, ներառյալ երկրում անկարգությունների դեմ պայքարը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: